ՎԱՐԴԱՆ ԱԲԵՂԱ ՆԱՎԱՍԱՐԴՅԱՆ

ՀՈԳԵՒՈՐ ԿՐԹՈՒԹՅՈՒՆԸ ԵՒ ԴԻԱԿՈՆԻԿ ԾՐԱԳՐԵՐԸ

«Ապրծո հանդէպ կապարյալ ծառայութիւնն այն է, որն առաջ է գալիս միայն Ապրծո հանդէպ սիրուց, իսկ ճշմարտապէս սիրողը հանձն է առնում կորցնել ունեցվածք, պատիվ, սիրելիներին եւ նոյնիսկ իրեն՝ չկորցնելու համար Ապրծո հանդէպ սերը: Անկապար ծառայութիւնն է, որ առաջ է գալիս պատիժների հանդէպ երկիւղից, որովհետեւ ով երկիւղից է ծառայում ու հնազանդվում, առավել սիրում է իրեն, քան Ապրծուն»:

Պողոս պատրիարք Աղրիանապոլսեցի

Քրիստոնեական վարդապետության ճշմարտությունները բնութագրելու համար կարելի է դրանք ամբողջացնել ՍԵՐ բառի մեջ. սեր ողջ արարչության նկատմամբ՝ մարդու, բնության, կենդանական եւ բուսական աշխարհի եւն: Քրիստոնեության մեծագույն՝ «սիրեցէք զմիմեանս» պատվիրանի լավագույն արտահայտություններից մեկը ծառայության առաքելությունն է: Աստվածային սիրո պատվիրանի կենսագործումն է ծառայությունը, որը քրիստոնեական Եկեղեցու, իբրեւ հավաքական գիտակից հավատացյալների միության, նաեւ ծուխի առաքելության էական մասն է, եթե ոչ հիմնական սկզբունքներից մեկը:

Սույն գրության մեջ նպատակ չունենք հիմնավորապես անդրադառնալու եւ վերլուծելու «դիակոնիա» եզրը՝ իբրեւ սոցիալական ծառայություն կամ օժանդակություն մարդ անհատին՝ թմրամոլության, հարբեցողության եւ նմանատիպ հարցերի ոլորտում ու սոցիալական ծառայության դաշտում: Անօթեւան եւ կարիքավոր անձանց օգնելու, մանկատան եւ հատուկ կարիքներով երեխաներին, երիտասարդներին, ինչպես նաեւ մեծահասակներին տարաբնույթ ծառայություններ բերելու, բժշկական օգնության կարիք ունեցող, սակայն նյութապես անապահով անձանց, ուսման վարձերը հոգալ չկարողացող ծնողների, ավուր հացի եւ հագուստի կարոտ մարդկանց օժանդակելու, տարբեր ընկերային-տնտեսական խնդիրներ ունեցող, զավակի արհեստական վիժեցման եւ նմանատիպ այլ մերժելի ու անընդունելի, հաճախ անընկալելի արարքների պատրաստ կանանց եւ զույգերի, նաեւ ընտանիքների եւ միայնակ ծնողների ու խնամակալների սոցիալ-նյութական բազմաբնույթ հարցերին պատասխան տալու, հաշմանդամների եւ այլ նմանատիպ ակտուալ խնդիրներին անդրադառնալու մի լայնածավալ դաշտ է

ընդգրկում դիակոնիայի քրիստոնեական ընկալումը: Թվարկված ամեն մի ոլորտ մտնում է հիմնական սոցիալական ծառայության եւ դիակոնիկ ծրագրերի շրջագծում:

Սուրբ Ղուկաս ավետարանիչը Գործք Առաքելոց գրքում անդրադառնում է մեզ արդեն հայտնի դարձած պատմությանը, թե ինչպես առաքյալները հոգեւոր ընդհանրական ծառայության եւ սպասավորության համար ընտրեցին 7 սարկավագ, որոնց գործունեության բնույթը հետագայում իրականացնում էին Եկեղեցու առաջնորդները, հայրապետներն ու վարդապետները, քահանաներն ու ծիսական համայնքի ամեն մի հավատացյալ (հմմտ. Գործք Զ. 2):

Հիսուս Քրիստոս Ավետարաններում հստակ շեշտում է Իր ծառայական առաքելությունը: Օրինակ՝ Մատթեոսի Ավետարանի Ի. 28-ում եւ Մարկոսի Ավետարանի Ժ. 45 -ում Նա ուղղակիորեն ասում է. «Մարդու որդին չեկավ ծառայություն ընդունելու, այլ ծառայելու»: Այդ ծառայության առաքելությունը Իր օրինակով Նա ավանդեց Խորհրդավոր ընթրիքի ժամանակ, երբ երեսը գետին խոնարհելով լվաց աշակերտների ոտքերը եւ պատվիրեց. «Դուք էլ պարտավոր եք միմյանց ոտքերը լվանալ» (Յովհ. ԺԳ.13): Այդ ծառայական գործողությամբ իսկ ազատեց նրանց մեղքի կապանքներից եւ արդարացրեց, այսինքն՝ երբեմն անձնական ծառայությունը մեր նման մեկ այլ անձի ոչ միայն մեզ է հոգեպես առողջացնում՝ վերահաստատելով խոնարհության մեջ, այլ այդ ծառայությունն ազդեցություն է թողնում դիմացինի վրա: Ասել է թե՝ ծառայությունն ինքնանպատակ չէ եւ անձնական հոգեւոր շահ չի հետապնդում, այլեւ նպաստում է մեր մերձավորին՝ ուղղված լինելով նաեւ Աստծուն:

Դիակոնիան, իբրեւ առաքելություն, կարելի է ընկալել իբրեւ ծառայություն Նոր Կտակարանին, ինչպես Պողոս առաքյալն է ասում. «Այսպիսի մի վստահություն ունենք առ Աստված՝ Քրիստոսի միջոցով. մենք անձամբ մեզնից որեւէ բան խորհելու կարող չենք, այլ Աստծուց է մեր կարողությունը, որը եւ կարող դարձրեց մեզ Նոր Ուխտի պաշտոնյաներ կամ ծառայողներ լինելու՝ ոչ թե գրով (նկատի ունի Հին Կտակարանը - Վ. Ն.), այլ հոգով (նկատի ունի Նոր Կտակարանը - Վ. Ն.)» (Բ Կորնթ. Գ. 6):

Յուրաքանչյուր քրիստոնյայի կյանքի ընթացք, անձնական, ընտանեկան, ընկերային կամ հավաքական կյանք, պետք է նպատակաուղղված լինի իբրեւ ծառայություն Քրիստոսին: Ծառայությունն առաքելություն է, որը շարունակական է, ինչպես նշում է Պողոս առաքյալը եփեսացիներին ուղղված իր թղթում. «Նա շնորհ տվեց ոմանց լինելու առաքյալներ, ոմանց՝ մարգարեներ, ոմանց՝ ավետարանիչներ, ոմանց՝ հովիվներ եւ ուսուցիչներ՝ հաստատելու համար սրբերին իրենց պաշտոնի կատարման մեջ, ի շինություն Քրիստոսի մարմնի»: Մենք այդ նույն որթատունկի՝ Քրիստոսի ճյուղերն ենք եւ ծառայությամբ միեւնույն մարմնին ենք մատուցում օգտակարությունը, որի վրա ամրացած եւ արմատացած ենք իբրեւ քրիստոնյաներ: Աստված առաքյալներին պատգամում է ծառայության առաքելության՝ այդ նույն պատգամը փոխանցելով նաեւ մեզ:

Դաստիարակության եւ կրթության գործի մեջ եղող անձանց, նաեւ ընտանիքի ծնողների համար իրենց կյանքում Տիրոջ օրինակը կենդանացնելը. մերձենալ

կարիքավորներին, սեղան նստել աղքատների եւ կարոտյալների հետ, մխիթարություն եւ սփոփանք բերել խռովված հոգիներին, հույս ներշնչել հուսահատվածներին, հավատով զորեպնդել թերահավատներին, արդարամտություն դրսեւորել եւ օգտակար լինել շահագործվողներին եւ տարբեր բռնությունների ենթարկվածներին, ազատություն քարոզել գրկվածներին եւ կեղեքվածներին: Միով բանիվ, ամեն մարդու առաքելության առանցքը պետք է լինի, Ավետարանի լույսով բարոյական ուսուցումը եւ կրթության ու դաստիարակության ճանապարհով մարդ արարածի մեջ անկյալ եւ խորտակյալ Աստվածատիպ նմանության, կատարյալ մարդկության եւ մարդկային արժանապատվության վերականգնումը:

Մարդկանց մեջ ընկերային ծառայությունը պետք չէ միայն ընկալել նյութական տարաբնույթ օժանդակություն ցուցաբերելու իմաստով. մարդու հոգում սիրո գաղափար վերարթնացնելը՝ ծառայության պատրաստ լինելու համար, եւ նրան բերելը այդ հոգեւոր գիտակցությանը, ավելի մեծ առաքելություն է:

Մեր օրերում սոցիալական ծառայության կենտրոններ հիմնելը եւ կարիքավոր անձանց օժանդակելը առաջնային եւ կարեւոր է, սակայն ընկերային ծառայության մեկ այլ հասկացություն նույնպես պետք է կարեւորել, ինչը մարդուն հոգեւոր գիտակցության բերելու մեծ առաքելությունն է, որը գերազանցապես կարելի է իրականացնել հոգեւոր կրթության եւ դաստիարակության միջոցով:

Անշուշտ, հոգեւոր կրթությունը կարելի է դիտարկել իբրեւ ծառայություն:

Մինչ երեխայի հասուն եւ իրական գիտակցական կյանքի տարիքը՝ նրա ընկալունակության ոլորտները պայմանականորեն կարող ենք բաժանել երեք կրթական փուլերի.

ա. մանկապարտեզային կամ նախադպրոցական տարիք,

բ. դպրոցական տարիք՝ վաղ, միջին եւ հասուն պատանեկություն,

գ. բուհական տարիք՝ երիտասարդություն,

Կարեւոր է, որ հատուկ ծրագրեր ուղղված լինեն այս խմբերի երեխաներին կրթելու եւ հոգեպես դաստիարակելու՝ բարեգործության, կարեկցանքի, հիվանդների այցելության եւ նմանատիպ արժեքներով, որը ինքնաբերաբար սոցիալական կրթություն կտա զարգացող սերնդին, որի համար ընկերային գործունեությունն արդեն ոչ թե պարզ արարք է հասարակական կամ բարեսիրական կազմակերպության մեջ, այլեւ համոզում եւ մարդկության օգտակարությանն ուղղված սրտից բխած բնական արարք՝ ինքնաբերաբար դառնալով հասարակությանը հոգեպես առողջացնող գործընթաց:

Այսօր մեր հասարակության մեջ բազմազան են սոցիալական խնդիրները: Վերը նշված երեւույթներին եթե ավելացնենք նաեւ մեր հայրենակիցների զանգվածային տեղափոխությունը գյուղերից քաղաք, նվազագույն տնտեսական պայմանների բացակայության հետեւանքով երկրից օրեցօր ահագնացող արտագաղթի ցուցանիշը, հայոց ազգային-հոգեւոր արժեքներով օժտված առողջ ընտանիքի առջեւ ծառացած հիմնախնդիրները (որտեղից ինչ որ առումով օտարացած է խորհրդատու հոգեւոր հովիվը՝

քահանան), արդիական անհրաժեշտություն է դառնում հայկական ընտանիքներից ներս հոգեւոր ծառայությունը զորացնելը:

Առաջարկվող միջոցներից հիմնականը հոգեւորականի կապն է նշյալ երեք խմբերի հետ՝ նախադպրոցական, դպրոցական եւ բուհական կրթական հաստատություններում: Հոգեւորականը հնարավորին չափ կարող է օժանդակել եւ նպաստել տարբեր կրթադաստիարակչական միջոցառումների կազմակերպմանն ու իրականացմանը, որին կարելի է հասնել ծնողի առջեւ ծառացած տարբեր խնդիրների քննարկման ու լուծման ճանապարհով: Հայաստանի պայմաններում դիակոնիկ խնդիրներից մեկն էլ այն է, որ սոցիալական օգնությունը հասարակությանը ցուցաբերվի ոչ միայն նյութական, որն անչափ կարեւոր է, այլեւ գիտակցական՝ հոգեւոր հիմքի վրա: Այսօր հասարակության մեջ հավատի գործոնը պետք է զորացնել նաեւ ամրացնելով վստահությունն ազգային-հոգեւոր արժեքների եւ դրանց խորհուրդը հանդիսացող հաստատությունների՝ դպրոցի ու Եկեղեցու հանդեպ:

Մի կարեւոր հանգամանքի պետք է ուշադրություն դարձնել. յուրաքանչյուրս մեր անձնական արարքներով օրինակ ենք մեր փոքրիկների համար, այսինքն՝ մեր առօրյան ինքնաբերաբար դառնում է կրթության միջոց: Փոքրիկն առավելաբար դաստիարակվում է շրջապատին նայելով, եւ ծնողի կամ մեծահասակի օրինակը չափազանց մեծ ազդեցություն է ունենում նրա աշխարհայացքի ձեւավորման վրա:

Քրիստոնեական բարձր արժեքների ճիշտ փոխանցումը մեր հասարակությանը եւ ի մասնավորի փոքրիկներին՝ ընտանիքի, դպրոցի եւ Եկեղեցու մեծագույն առաքելությունն է: Երեխան, իր բոլոր դաստիարակչական առանձնահատկություններով հանդերձ, պետք է ճանաչի ու զատորոշի ճիշտն ու սխալը, բարին տեսնի, լսի ու սովորի իրագործել: Ճիշտ դաստիարակությունն ամեն մարդ յուրովի է ընկալում. ճոխությունների, առավելությունների, երբեմն սանձարձակության հասնող ազատության արտոնությունը եւ նյութական բարիքը երեխաների երջանիկ լինելու եւ փայլուն ապագա ունենալու երաշխիքներ չեն: Այս արժեքները փոխանցելու առաքելության իրագործման պակաս կա մեր ժամանակներում, եւ ամեն կարելի միջոց, ժամանակակից համացանցային կամ ավանդական բոլոր հնարավորությունները պետք է ի գործ դնել՝ կապ հաստատելու համար երեխաների, պապանիների, երիտասարդների եւ մեծահասակների միջեւ: Շարունակական այս գործընթացը մեզ մեծ հնարավորություն կտա օգնություն ցուցաբերելու կարիքավորներին, որոնք կկարողանան նաեւ մեր օգնությամբ ձերբազատվել իրենց ծանր հոգեվիճակից եւ ինտեգրվել հասարակությանը՝ իբրեւ դրա անբաժանելի մաս: